ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 դեկտեմբերի 2025թ. թիվ 784-Ա

Ն.ՆԱՎՈՅԱՆԻՆ «ԱՐԵՎԱՇՈՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1) կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի թիվ 129-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 85-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի մարտի 15-ի թիվ 86-Ա որոշման 1-ին կետը և ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Արևաշողի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 3 որոշումը, հաշվի առնելով Ն.Նավոյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Նազելի Բենիկի Նավոյանին 2025 թվականի դեկտեմբերի 2-ից նշանակել «Արևաշողի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

2. Ն.Նավոյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

X

2025-12-02 14:09:01 GMT+4
Հանձնարված է ԷՀԱԿ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Signed by: MKRTCHYAN AREN 1204920311 Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 2
ք.Վանաձոր